ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«9» հունվար 2020թ. № 96

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 16.12.2019 թ. թիվ 152-1 որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ

Ներկայումս ՀՀ վարչական դատարանում մի շարք վարչական գործերի շրջանակներում վիճարկվում է ՀՀ ՊԵԿ նախագահի 16.12.2019 թ. երրորդ անձից (այդ թվում՝ պետական մարմնից) ստացված կամ օպերատիվ-հետախուզական գործողությունների արդյունքում ձեռք բերված տեղեկությունների հիման վրա անձանց ընդհանուր տնտեսական շահերից ելնելով համաձայնեցված գործելու հիմքով փոխկապակցված ճանաչելու մասին թիվ 152-1 որոշումը, որով պահպանված չեն օրենսդրական որոշ պահանջներ:

Մասնավորապես, ՀՀ ՊԵԿ ՀՕՀՎ վարչության պաշտոնատար անձանց կողմից իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ձեռքբերած տեղեկությունները բավարար և անհրաժեշտ չափով չեն հիմնավորում «ԼԵՅԴԻ ԶՈՆ», «ՓԱՈՒԵՐ ԶՈՆ», «ԼՈՒՍԻ ԴԱՆՍ», «ԼԵՅԴԻ ՋԻՄ», «ՍԹՐՈՆԳ ՋԻՄ», «ՖՈՐՏՈՒՆԵ» ՍՊ ընկերությունների՝ փոխկապակցված և ընդհանուր տնտեսական շահերից ելնելով համաձայնեցված գործող լինելու հանգամանքը, ինչն անապացուցելի է դարձնում ՀՀ ՊԵԿ նախագահի 16.12.2019 թ. թիվ 152-1 որոշման հիմնավորված լինելու հանգամանքը:

Հաշվի առնելով, որ ի վնաս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կայացված յուրաքանչյուր դատական ակտով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վրա դրվում է նաև դատական ծախսերի, այդ թվում փաստաբանական վճարների փոխհատուցման պարտականություն, անհրաժեշտ է ՀՀ ՊԵԿ նախագահի 16.12.2019 թ. թիվ 152-1 որոշումը ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից սեփական նախաձեռնությամբ ճանաչել անվավեր, որպիսի գործողությունների հետևանքով Պետական եկամուտների կոմիտեի նկատմամբ չեն առաջադրվի հավելյալ պարտավորություններ:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

Նկատի ունենալով վերոգրյալը, պետական միջոցների անարդյունավետ օգտագործումից խուսափելու նպատակով և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի բ. կետով, 2-րդ մասով, 67-րդ հոդվածով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Անվավեր ճանաչել ՀՀ ՊԵԿ նախագահի 16.12.2019 թ. թիվ 152-1 որոշումը,
2. Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ պարբերության՝ սույն որոշումը հասցեատերերին իրազեկելու նպատակով, հրապարակել ՀՀ ՊԵԿ պաշտոնական կայք էջում:

6/9/2020

X

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Signed by: HOVHANNISYAN EDVARD 2001830505

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ * ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ